

դրօշաբշաւի և պարանաձգութեան բաժիններ; Եղան նաև արգելարչաւ, զնդարձակում և զւարձախազեր; Խաղերէն շատերուն իրենց մասնակցութիւնը բերին նաև աղջիկները; մանշերուն նման բաժնուած երկու մրցորդ խումբերուն Արդիւնքը յաջող էր ըստ ամենայնի և լաւագոյնս կ'արտայալուէր ֆիզիքական դաստիարակութեան ընծայուած կառերութիւնն ու խնամքը վարժարանէն ներս:

Դաշտահանգէսի աւարտին, Գերշ. Նախագահ Սրբազնը պարգևատրեց յաջող մարդիկները բաժակներով ու մետաղներով:

Հանդէսը վերջացաւ ժամը 6.30 ին:

#### Ա. — ԱՄՓԱՎՄՐՁԲ ՀԱՆԳԻՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԲԱԺՆԻՆ

Տեղի ունեցաւ 24 Մայիս, Կիրակի կեսօրէ ետք ժամը 4ին, ժառանգ. Վարժարանի հանդիսաբանին մէջ, նախագահութեամբ գարձեալ Գերշ. Տ. Սուրէն Արքեպոսի և ի ներկայութեան Միարան Հարց և ժողովուրդի խուռան բազմութեան:

Շուրջ երկու ժամերու ընթացքին, Մանկապարտէզի և նախակրթարանի Ա. դաստիարանի փոքրիկները գովելի յաջողութեամբ իրագործեցին հաճելի յայտագիր մը, բազկացած արաւասնութիւններէ, խմբերգներէ, մարզանքներէ, հայկական պարերէ և փոքրիկ տրամախօսութիւններէ, որոնք արժանացան ներկաներու բուռն ծափահարութիւններուն: Այս բոլորը ազացոյցն էր ու արդիւնքը Մանկապարտէզի ուսուցչունեներուն՝ մեր մատաղ սերունդի առողջ զաստիարակութեան համար թափած տարրան մը խանդու ու բոլորանուէր աշխատանքներուն:

Հանդէսի աւարտին, Գերշ. Սրբազնը վկայականներ բաժնից յեղիկ դաստիարանէն ընծանաւարտ 23 երկուսու փոքրիկներուն, ու ձնողներուն խօսած յորդորականնեն ետք օրհնեց զանոնք Պահպանիչով ու փակեց հանդէսը Տէրունական Ազգային երգեցողութեամբ:

#### Գ. — ԱՄՓԱՎՄՐՁԲ ՀԱՆԳԻՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Տեղի ունեցաւ Կիրակի, 31 Մայիսի երեկոյեան ժամը 7ին, ժառանգ. Վարժարանի հանդիսաբանին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոսի, ի ներկայութեան Հոգէ. Հայրերու և ձնողներու ու հրաւիրեալներու բազմութեան:

Հանդէսը բացուցեաւ Արքայական Քայլերգով և Հայրապետական Մազմերգով: Ապա, երկու ժամերու ընթացքին, զործադրութեան դրուցաւ Կոկիկ յայտագիր մը, բազկացած ընթացաւարտ դաստիարանի աշակերտ-աշակերտուններու կողմէ պատրաստուած հայերէն, արաբերէն և անգլերէն ատենախօսութիւններէ և ռւբերներէ, խմբերգներէ՝ զորս յա-

ջողութեամբ կատարեց Վարժարանի երկու երգախխումբը՝ ղեկավարութեամբ Հոգէ. Տ. Արշակ Արզ. Խաչատրութեանի, արտասանութենէ և դաշնամուրի ու ձեռնադաշնակի նուագածութենէ: Հրաժեշտի երգէն ետք, Վարժարանի առօմ: Տեսուչ Հոգէ. Տ. Դանիէլ Արզ. Եամելեան կարդաց վարժարանի միամեայ զործունէութեան տեղեկագիրը, որ պիտի հրատարակուի Սրբունի յաջորդ թիւով: Ապա կատարուեցաւ վկայականներու և մրցանակներու բաշխումը: Հանդէսը փակուեցաւ նախագահ Ա. Հօր խրատականով և Պահպանիչով:

#### ՈԱՓԱՅՑԷԼ ՊԱՄՊԱ ՃԵՆԱԶԵԱՆ (1882 - 1964)

Ա. Յակոբեանց Միարանութիւնը վիշտը ունեցաւ կորսնցնելու աշխատաւոր Միարան Ակնցի, Ծափայէլ Պապա ձէնազեանը, որ 12 Յունուար 1947ին ընդունուած էր Միարանից շարքին մէջ, և կը ծառայէր այդ թուականէն ասդին մինչև 1901, Ա. Յարութեան Տաճարին մէջ, երբ 1961ին իրքն պահպան Ա. Գլխազրի մատրան, Ս. Յակոբեանց Մայր Տաճար փոխազրուեցաւ: 1902 Յուլիսին, ինքնայժմար կամքով փափաքեցաւ փախազրուիլ Ռաս էլ Ամուսի ծերանոցը, ուր և վախճաննեցաւ Յունիս 1ի առաւտուն, յառաջացեալ տարիքի մէջ:

Ծափայէլ Պապա ձէնազեան բարի, համեստ, աղօթասէր, պարտաճանաչ, նախանձախնդիր և նուրիուած աշխատաւոր Միարան մըն էր Քիսիսոսի Ս. Գերեզմանին և Ա. Տեղեաց ժառայութեան մէջ:

Հանգուցեալին թազման կարգը կատարուեցաւ նոյն օրը յետ երեկոյեան ժամերգութեան, Մայր Տաճարի Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպոսի և մասնակցութեամբ բովանդակ Միարանութեան թաղուեցաւ Զամ-Թաղի գերեզմանոցը: Հանդիսաւ յարիտենական իր հոգեւոյն:

#### ԶՄՐՈՒԻՍ ՄԱՅՐԱՎԵՏ ՍԱՐԱՖԵԱՆ (1890 - 1964)

Նոյնպէս ցաւով կ'արձանագրենք մահը Ա. Աթոռոյս տարից Մայրապետներէն Զմրուիս Մարաֆեանի, Ափիուն-Գարանիսարցի, որ տեղի ունեցաւ անցնող Ապրիլի 6ին:

Հանգուցեալը 1955 էն ի գեր Կ'անդամակցէր Ա. Աթոռոյս Մայրապետաց դասին, հակառակ իր յառաջացեալ տարիքին անձնուիրարար ժառայելով այս Հաստատութեան:

Ցուղարկաւորութիւնը կատարուեցաւ նոյն օրը կեսօրէ ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցու մէջ՝ Հանգիստ իր բարի հոգւոյն